«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Նարինե Վարդանյան
անուն, ազգանուն

Արմավիր քաղաքի Հ 5 հիմնական դպրոց
դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Արմինե Անտոնյան
անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ- 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցերը 6

2. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 22

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում ներառված է որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Ժամանակակից դպրոցում այս կամ այն ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում սովորողների գիտելիքների և համապատասխան կարողությունների ձևավորման պահանջների մեջ առանցքային տեղ ունեն արժեքներն ու արժեքային համակարգի ձևավորումը, որի կարևորությունը չի կարելի թերագնահատել: Այս իրողությունը հիմնականում բխում է կրթության արդիականացման հայեցակարգի ներկայիս պահանջներից: Արդի գրական կրթության հիմնական խնդիրը երեխայի ինքնազարգացման ապահովումն է, երեխաների կողմից հոգևոր արժեքների յուրացումը, նրանց գեղարվեստական-գեղագիտական ճաշակի և ստեղծագործական ներուժի, խոսքի զարգացումը: Այս կամ այն ուսումնական առարկայի ուսուցման և, առհասարակ, ուսումնառության առանցքում են դրվում որոշակի կարողությունների և հմտությունների, ինչպես նաև սովորողի վերաբերմունքի, արժեքային համակարգի ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը: Այս առումով՝ անհերքելի է նաև մայրենիի ուսումնասիրման գործընթացում գրական-գեղարվեստական ստեղծագործությունների, բանահյուսական պատառիկների ուսուցման նշանակությունը և կարևորությունը: Վերջիններս օժտված են կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման հսկայական ներուժով: Խնդիրը դիտարկվում է տարրական դպրոցում մայրենիի ուսուցման արդյունավետ գործընթացի կազմակերպման մեթոդների ընտրության, նպատակային և հետևողական կիրառման համատեքստում, քանի որ երեխայի բարոյական, հոգևոր, գեղագիտական, իմացական, մշակութային և ազգային արժեքների ձևավորման համար մեծ նշանակություն ունի տարրական դպրոցը, մասնավորապես՝ հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների հիմքերն արմատավորող մայրենին: Հատկապես կրտսեր դպրոցականների արժեքների ձևավորման հարցում անժխտելի է վերջինիս մեծ դերը: Հենաբար՝ կարևորվում է առարկայի դասավանդման ընթացքում ուսումնական նյութերի ուսուցումը սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանն ի նպաստ դարձնելու, դրա հնարավորություններն ընդլայնելու հնարավոր ուղիների վերհանումը, նախանշումը

և մշակումը՝ իբրև առարկայի դասավանդման արդյունավետ գործընթացի ապահովման երաշխիք: Ըստ էության, առարկայի դասավանդումը պետք է դառնա ակտիվ և ձևավորող գործընթաց: Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, որին պետք է ծառայեցնել ուսումնական առարկաների դաստիարակչական ողջ ներուժը, միևնույն ժամանակ՝ ապահովել դաստիարակության ձևավորող և զարգացնող բնույթը: Ներկայումս ՀՀ հանրակրթական համակարգի՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցումը, նոր կրթակարգի ինտեգրումը պայմանավորում է կրթական համակարգի նոր պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը և առաջադրում կրթական հաջողված համակարգ ունենալու պահանջն առ այն, որ կրթությունը պետք է ապահովի ոչ միայն գիտելիքի փոխանցումը, կարողություն-հմտության ձևավորումը, այլև կարգավորի սովորողի արժեքային համակարգի ձևավորման խնդիրները: Նկատենք, որ կրթական համակարգի բարեփոխումներին մշտապես զուգահեռվող խնդիր է դառնում նաև դպրոցական կրթության որակի ապահովումը, իսկ դրանից անմիջականորեն բխում է առարկայի դասավանդման գործընթացի արդյունավետության առավելագույն մակարդակի ապահովման պահանջը, որն էլ մշտապես արդիական է դարձնում քննարկվող խնդրի ուսումնասիրումը: Արժեքների նկատմամբ հարգանքի, դրանց ըմբռնման և ընդունման խնդիրն ավելի արդիական է, քան երբևէ:

Աշխատանքի նպատակը: Մեր կողմից ներկայացվող սույն հետազոտական աշխատանքը նպատակաուղղված է առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցի ուսումնասիրությանը՝ առարկայի դասավանդման գործընթացի արդիականացման հնարավորությունների բացահայտման համատեքստում:

Աշխատանքի խնդիրները: Ելնելով աշխատանքի նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ տեսա-մեթոդական գրականություն:

2. Պարզել «արժեքային համակարգ» հասկացությունը և դրա բովանդակությունը առարկայի դասավանդման համատեքստում:
3. Վերհանել մայրենիի դասավանդման գործընթացում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցերը, ուղիներն ու մեթոդները:

Հետազոտության վարկածը: Կարծում ենք՝ առարկայի դասավանդման գործընթացի արդիականացմամբ հնարավոր կլինի ուղի հարթել ուսումնական առարկաների դասավանդման, մասնավորապես՝ ուսումնական նյութերի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ կազմակերպման համար և այն դարձնել նպատակային, լուծել ուսումնական կոնկրետ խնդիրներ, այդ թվում՝ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման խնդիրը՝ համարժեք մեթոդների ընտրությամբ և նպատակային գործադրմամբ:

1. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցերը

Արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցերը մշտապես եղել են մանկավարժական գիտության ամենատարբեր ուսումնասիրությունների կիզակետում: Պատահական չէ, որ ներկայումս մանկավարժության մեջ ձևավորվել են արժեքային համակարգի տարբեր ըմբռնումներ: Այդուհանդերձ՝ ընդունված է «արժեհամակարգ» հասկացության այն ընկալումը, որի համաձայն՝ «արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար»[1]:

Ընդհանուր առմամբ՝ արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ինչպես ձեռք բերված գիտելիքի և տեղեկատվության, այնպես էլ սեփական կենսափորձի հիման վրա: Արժեքային համակարգը կազմող համախմբերից յուրաքանչյուրի ձևավորման խնդիրները լուծվում են ինչպես ընտանիքում, այնպես էլ ուսումնական հաստատություններում՝ ուսումնա-դաստիարակչական գործընթացի միջոցով: Այս հարցում անգնահատելի է դպրոցի դերը, որտեղ ուսումնական բոլոր առարկաների դասավանդման ընթացքում կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման տարբեր խնդիրների լուծումը, այդ ընթացքում սովորողներին փոխանցվող գիտելիքները, տեղեկատվությունը դառնում են անցյալի փորձի յուրացման, ազգային գիտակցության ձևավորման, հայրենասիրության և արժեքների ու արժեքային տարբեր որակների ու կողմնորոշումների արմատավորման հիմքը:

Արժեքային համակարգի ձևավորման կարևորությունը հիմնավորվում է մի կողմից հասարակության արմատական փոփոխությունների, մյուս կողմից՝ դրանից բխող՝ կրթական համակարգի վերակառուցման, արդի կրթական պահանջներին այն համապատասխանեցնելու հանգամանքով: Արժեքային համակարգի ձևավորման կարևորությունը փաստվում է նաև այն իրողությամբ, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար

[1] Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ա պրակ, https://vsu.am>grqer>aprak, էջ 396-401:

ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևորվում է անհատ-քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը[2]:

2004 թվականին ՀՀ կառավարությունը հաստատեց «Հանրակրթության պետական կրթակարգ» և «Պետական կրթական չափորոշիչ» կոչվող նորմատիվային փաստաթղթերը, որոնցով ամրագրվեց արժեքային համակարգ բաղադրիչի ներառումը հանրակրթական դպրոցում, իսկ 2006 թվականի նոր ուսումնական տարուց արդեն դրանք գործեցին: Հասարակության և յուրաքանչյուր անհատի բարեկեցիկ կենսակերպի ձևավորման ու ապահովման համար ՀՀ հանրակրթական դպրոցներում արժեքային որոշակի համակարգի առկայությունը կրթության բովանդակության անհրաժեշտ բաղադրիչներից մեկը դարձավ, որը սովորողներին պետք է փոխանցեր գիտելիքներ, կարողություն-հմտություններ, որոնք ուղղված լինեն ընդհանրական համակարգված արժեքային հիմքերի ձևավորմանը և դրանով՝ պետության, ազգի և անհատի ներդաշնակ փոխհարաբերության ապահովմանը: Կրթակարգով ամրագրվեց ապագա շրջանավարտի կատարելատիպը, որն առավելապես արժեքային համակարգի չափանիշներ էր պարունակում[3]: Ըստ էության, դրվեց կրթական լավ համակարգ ունենալու պահանջ, որը ենթադրում էր ոչ միայն գիտելիքի փոխանցում, կարողություն-հմտության ձևավորում, այլև սովորողների արժեքային համակարգի ձևավորման խնդիրների կարգավորում: Սովորողի արժեքային վերջնարդյունքների մասին հիմնահարցերն էին.

- ✓ լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,
- ✓ դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ և այլն[4]:

---

[2] Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության «արդիականացումը» համաշխարհային գլոբալացման համատեքստում, «Կրթությունը 19-րդ դարում» գիտակրթական հանդես, հ. 1, Երևան, 2014, էջ 61:
[3] Պապիկյան Կ., Սաֆարյան Լ., Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի համալիր բնույթը, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ա պրակ, https://vsu.am>grqer>aprak , էջ 359:
[4] Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004, էջ 43:

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկը, գերնպատակը, թերևս, սովորողի մեջ ազգային բարոյական և հոգևոր արժեքների կերտումն ու զարգացումն է, բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումը: Ըստ էության, նշված արժեքները պետք է դառնան յուրաքանչյուր սանի անհատականության մասնիկը, նրա անձնային հատկանիշների ձևավորման հիմքը:

Այսօր՝ հասարակության սոցիալ-տնտեսական արագ տեղի ունեցող փոփոխությունները հանգեցրել են սոցիալական և անհատական արժեքների համակարգի որակական փոփոխությունների, որոնց համընթաց քայլող և դրանից բխող ուսումնա-դաստիարակչական խնդիրներն արդյունավետ լուծող կրթական համակարգ ունենալու արդի պահանջը հանգեցրել է հանրակրթության հարափոփոխման, իսկ արժեքների որակապես փոփոխման կամ նոր արժեքների առաջացման պայմաններում խնդիրն առավել սրվում է, որն էլ, կարելի է ասել, յուրաքանչյուր ուսուցչի առաջադրում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերի միջոցով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության բավականին բարդ խնդիրը: Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա սովորողների համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ[5]:

Արագ տեղի ունեցող փոփոխություններն, ըստ էության, կապվում են գիտատեխնիկական արագընթաց զարգացմամբ, հասարակական կյանքի արագընթաց զարգացմամբ, համաշխարհայնացման (գլոբալացման) գործընթացով, որն էլ կրթական համակարգին առաջադրում է նոր մարտահրավերներ՝ ժամանակի փոփոխությունների արդյունավետորեն և արագ արձագանքելու պահանջ: Վերջինս ենթադրում է կրթության բարեփոխում, կրթական առավել արդյունավետ մոդելների մշակում, արժեքային համակարգի բաղադրիչների հստակ սահմանում և դրանց ձևավորման քայլերի, սկզբունքների նախանշում:

[5] Պապիկյան Կ., Սաֆարյան Լ., Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի համալիր բնույթը, էջ 360:

Հարկ է նշել, որ սովորողների արժեքային համակարգի ձավորման և այն ամուր հիմքերի վրա դնելու խնդիրը ներկայումս դպրոցի գլխավոր առաքելությունը պետք է լինի: Դա կապվում է ստեղծված ներկայիս աշխարհաքաղաքական պայմանների հետ, երբ մեր երկիրը հայտնվել է ազգի անվտանգության ապահովման, պետական մտածելակերպ ունենալու, ապագայի մարտահրավերներին դիմակայելու խնդրի, մեզ փոխանցված արժեքների փոխակերպման վտանգի, ազգի ինքնության պահպանման խնդիրների առջև: Հենց այստեղ է, որ պետք է առանձնակի կարևորվի առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ համամարդկային ու ազգային արժեհամակարգի ձևավորման խնդիրը: Այսօր կրթությունը պետք է դառնա մեզ դարերով ավանդված ազգային, մշակութային, հոգևոր արժեքների փոխանցողն ու պահպանողը: Ազգային արժեքների ձևավորումն ու պահպանումն այսօր դպրոցի կարևորագույն նպատակներից է: Ներկայումս, երբ տարբեր ժողովուրդներ ու ազգեր ձուլվում անհետանում են, գերակա ռազմավարության նշանակություն ունեցող հիմնախնդիր է դառնում ազգային արժեհամակարգի ձևավորումն ու զարգացումը: «Ձևավորել և ամրագրել անցյալի արժեքների արժեբանական ժառանգությունը, արդի պահանջներին համապատասխան կիրառելու գործնական ունակությունների ձեռքբերումը, որը և համարվում է հանրակրթության ոլորտի հիմնական գերխնդիրը»[6]:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման առումով առանձնահատուկ տեղ ու դեր ունի տարրական դպրոցը, քանի որ այնտեղ է երեխան հաղորդակից դառնում հասարակական-գիտական նախնական տեղեկատվությանը և վերջինս առօրյա կյանքում վերամիաստավորելու նախնական փորձ ձեռք բերում: Մասնավորապես՝ մայրենիի ուսուցումը արժեքներին հաղորդակցվելու լավագույն միջոցներից է: Սա նշանակում է, որ մայրենիի ուսուցումը չի ենթադրում և ներառում միայն լեզվական-քերականական նախնական գիտելիքների ուղղակի փոխանցում երեխային, այլ՝ դրանց միջոցով նաև ազգային, հոգևոր ու բարոյական արժեհամակարգին հաղորդակցման ապահովում:

[6] Բաղդասարյան Է., Արժեքային վերակառուցումները ազգային կրթական բարեփոխումների համատեքստում, որպես Արցախյան շարժման ձեռքբերում, ԱրՊՀ, Գիտական ընթերցումներ, 2018(10), https://artsakhlib.am>2018/10, էջ 222:

Յուրաքանչյուր ուսուցչի խնդիրն է՝ առարկայի դասավանդման գործընթացում հասնել նրան, որ երեխան գիտակցի դրա կարևորությունը, օգտակարությունը, այն է՝ այդ գործընթացն ընկալի որպես ոչ միայն զուտ տվյալ դասանյութի, այլև այն ներկայացնող ազգերի ու ժողովուրդների արժեհամակարգի, մշակութային արժեքների ու կյանքի հիմնական առանձնահատկությունների իմացություն, և դրա հիման վրա՝ գնահատողական վերաբերմունք ձևավորի ինչպես վերջիններիս, այնպես էլ սեփական ժողովրդի ու երկրի մշակույթի, մտածելակերպի հանդեպ, կարողանա ճիշտ արժևորել ու վերագնահատել բարոյական, հոգևոր, համամարդկային ու ազգային արժեքները:

Մայրենիի ուսուցման ժամանակակից հայեցակարգը ներառում է ոչ միայն լեզվական գիտելիքների, այլև դրանց միջոցով ավանդույթների, սովորույթների, ապրելակերպի, հավատալիքների, գաղափարախոսության, աշխարհի մասին (աշխարհայացք) պատկերացման, արժեքային համակարգի և շատ ավելիի» յուրացում: Որպես կանոն, ծանոթանալով նոր գիտելիքների՝ երեխաները բացի դրանք ձեռք բերելուց, հաղորդակցվում են նաև ազգային մշակույթին և հոգևոր հարստությանը: Ստորև փորձել ենք քննարկել մայրենիի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հնարավորությունները, արդյունավետ ուղիներն ու մեթոդները:

2. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում՝ մայրենիի ուսուցման համատեքստում

«Ժամանակակից կրթության միտումը համարվում է ավանդականից անցումը դեպի կրթության անհատական-կողմնորոշիչ տիպին, որը կրթական տեխնոլոգիայի առավել բարձր մակարդակ է»[7]: Այս տեսանկյունով՝ կարևորվում են սովորողի անհատական զարգացման գործընթացները, այդ թվում՝ արժեհամակարգի ձևավորման խնդիրը: Անհերքելի է, որ մայրենիի ուսուցման գործընթացի արդիականացումը՝ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման տեսանկյունից, ենթադրում է նաև ադեն մշակված և փորձարկված մեթոդների նորովի գործադրում ու վերամշակում, ինչպես նաև նորահայտ մեթոդների փորձարկում ու համադրում ինչպես նոր, այնպես էլ արդեն առկա և փորձարկված մեթոդների հետ: Նման մոտեցումն, ըստ էության, պետք է նպատակամիտված լինի առարկայի դասավանդման գործընթացի գործառութային ընդլայնմանը, որի հիմնարար գործառույթներից մեկն էլ պետք է լինի արժեհամակարգի ձևավորումը: Այսինքն՝ առարկայի դասավանդումը չի սահմանափակվում միայն ուսուցողական, կրթա-դաստիարակչական այս կամ այն գործառույթով, այլ ներառում է գործառութային ընդլայնված համակարգ՝ ուղղված սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, նրանց համակողմանի զարգացմանը, ուսումնական տարբեր խնդիրների կարգավորմանը: Առարկայի դասավանդումը արժեքային համակարգի ձևավորմանը նպատակաուղղելը հնարավոր է դասավանդումը բազմապլան, բազմաբովանդակ և ճկուն դարձնելու ճանապարհով, իսկ այդ ճանապարհը կարելի է հարթել այդ գործընթացում որոշակի նպատակներից և սպասվող արդյունքներից բխող մեթոդական կառույցի շարունակական զարգացման հենքով: Ասվածի կարևորությունը փաստում է նաև այն հանգամանքը, որ կրթական համակարգը անընդհատ զարգանում է, իսկ մեթոդը ուսումնական գործընթացի կազմակերպման քարացած ձև չէ և ենթակա է նորացման ու զարգացման:

Առարկայի դասավանդման գործընթացը միատարր չի կարող լինել: Այն «ստեղծվում է» ուսուցչի և սովորողների համատեղ գործունեությամբ՝ նախապես սահմանված նպատակի և խնդիրների ակնկալվող արդյունքների համաձայն, սակայն ենթակա է փոփոխությունների և պահանջում է ստեղծարար մոտեցում նաև

[7] Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Մայրենի 2-4, Ուսուցչի ձեռնարկ, Մակմիլան-Արմենիա, 2007, էջ 5:

մեթոդների գործադրման հարցում: Առարկայի դասավանդման գործընթացի կազմակերպման մեթոդի ընտրությունը կախված է ուսուցանվող ուսումնական նյութի թեմայից, դասի նպատակից:

Տարրական դասարաններում այս կամ այն դասանյութի ուսումնասիրումը հիմնականում իրականացվում է ընթերցանության միջոցով, որը հնարավորություն է տալիս կազմակերպել երեխաների ինքնուրույն գործունեությունը և նպաստել նրանց մտածողության, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Սակայն, ընթերցանությունը պետք է մշտապես զուգակցել նաև այլ՝ ինչպես ավանդական, այնպես էլ նոր՝ փոխգործուն կամ ինտերակտիվ մեթոդներով: Այս դեպքում՝ աշակերտները ոչ միայն ընթերցում են դասանյութը, այլ նաև նրանում պատկերվող իրողությունները, հերոսների արարքները, հատկանիշները փորձում են կապել, համադրել և համեմատել կյանքում, առօրյայում հանդիպող նմանատիպ իրավիճակների, խնդիրների հետ, գնահատել հերոսների արարքները, արտահայտել իրենց վերաբերմունքը այդ ամենի վերաբերյալ, հարցեր տալ:

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերը սովորողների արժեքային համակարգի ձևավորմանն ի նպաստ դարձնելու համար առանձնակի ուշադրություն պետք է դարձնել նաև աշակերտների համար այն իմաստավորելու և գիտակցական հիմքերի վրա դնելու խնդրին, քանի որ ինքնուրույն ընթերցանության արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե երեխան որքանով է կարևորում տվյալ նյութի ընթերցումը և իմացությունը, ինչ է ակնկալում սովորել, բացահայտել, իսկ դրա համար երեխան պետք է գիտակցի, թե ինչով կարող է օգտակար լինել ընթերցվող նյութը, դրանից ստացված տեղեկատվությունը: Նա պետք է հստակ իմանա, թե ընթերցանությամբ ձեռք բերված գիտելիքները որտեղ կարող է կիրառել, սեփական կենսափորձում այն դիտարկել, վերաիմաստավորել ու համեմատել իրականության, առօրյա կյանքի կամ սեփական կենսափորձի նմանատիպ իրողությունների հետ: Նման մոտեցմամբ երեխայի մեջ որոշակի վերաբերմունք է ձևավորվում ձեռք բերած գիտելիքների և ստացված

տեղեկատվության առնչությամբ, որն էլ մեծ խթան է արժեքների տարբերակման, դրանք գնահատելու համար:

Ստորև նկարագրվում են մայրենիի դասավանդման գործընթացի կազմակերպման օրինակներ՝ ուղղված սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման խնդրի լուծմանը:

Մայրենիի 4-րդ դասարանի դասընթացում և ինքնուրույն ընթերցանության նյութերում նախատեսվում է հայ մեծագույն արվեստագետ Մարտիրոս Սարյանի կյանքի ու արվեստի վերաբերյալ ուսումնական նյութը: Աշակերտներին ինքնուրույն ընթերցանության նախատրամադրելու և բնագրային տեքստի բովանդակության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու նպատակով ուսուցիչը հանդես է գալիս ներածական խոսքով և նշում, թե որքան կարևոր է ճանաչել մեծանուն մարդկանց, նրանց կյանքին ու գործին հաղորդակից դառնալով՝ օգտակար օրինակ վերցնել: Երեխաները հասկանում են, որ իրենց կյանքում տեղ կարող են գտնել հանճարների շատ արարքներ ու գործեր, որ նրանց ապրածն ու կենսափորձը կարող են ուղենիշ դառնալ ողջ կյանքի ընթացքում: Աշակերտների հետաքրքրության խթանմանը հաջորդում է բնագրային նյութի ընթերցումը: Երբ աշակերտներն արդեն ընթերցել են տեքստը, առաջարկվում է, որ իրենց կյանքից հիշեն ինչ որ դեպք՝ կապված ստեղծագործության բովանդակությանը: Այնուհետև «Մանրապատում»[8] մեթոդով աշակերտներին առաջարկվում է դասանյութը վերապատմել հետևյալ կետերի համաձայն՝ ըստ հերթականության.

1. Ինչի՞ մասին էր տեքստը (երեխաները համառոտ վերապատմում են ընթերցածը կամ մեկ նախադասությամբ գրում):
2. Տեքստից ընտրել մի հղում ֆրազա, ցիտատ, որը բնութագրում է ընթերցված նյութը: Այն դուրս գրել տեքստից:
3. Տեքստից ընտրել բնագրային նյութը բնութագրող մեկ բառ, օրինակ՝ արվեստագետը, նկարիչը, սարյանական նկարչություն և այլն:
4. Նկարել էսքիզ կամ որևէ խորհրդանիշ, որն արահայտում է ընթերցված նյութի միտքը:

[8] Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ, Վանաձոր, 2008, էջ 13-14:

5. Շարունակել հետևյալ միտքը. «Ամենալավն այս տեքստում այն է, որ…»:

Ընթերցված նյութի մեկնաբանումն ու վերլուծությունն իրականացվում է խմբային աշխատանքով, որը կատարվում է մայրենիի դասագրքում տրված դասանյութի[9] և ինքնուրույն ընթերցանության համար նախատեսված համապատասխան նյութերի[10] օգնությամբ: Ստեղծվում են 5 հոգանոց թեմատիկ խմբեր, որոնցից յուրաքանչյուրին տրվում է մեկական թեմա՝ «Պատառիկներ Սարյանի կյանքից», երբ ընթերցանության տեքստերից խմբի յուրաքանչյուր անդամ դուրս է գրում կամ իր բառերով վերաշարադրում Սարյանի կյանքի (մանկություն, երիտասարդություն, հայրենավեր գործ, զարմանահրաշ կտավների ստեղծման պատմություն և այլն) մասին պատմող որևէ դեպք կամ դրվագ, «Սարյանական արվեստը կամ ներկապնակը»՝ Սարյանի կտավները միջազգային նկարչական ցուցահանդեսում, Ավետիք Իսահակյանի խոսքերը նրա արվեստի մասին, Սարյանական գույները՝ ըստ Լեոնիդ Վիլեսլավսկու, «Մանկություն, որտեղ ծնվեց նկարիչը»՝ կատարվում է «Գնում եմ արևի հետևից» նյութի հիման վրա, «Իմ հայրենիքը Սարյանի կտավներում»՝ կատարվում է ըստ «Հայաստանը կանչում է» ինքնուրույն ընթերցանության նյութի, «Նկարչի մարդկային նկարագիրը», երբ խմբում ընդգրկված աշակերտները տեքստից դուրս են գրում նկարչին բնութագրող տողերը, կատարում բնութագրական աշխատանք՝ ինտերակտիվ գրատախտակին գրելով նկարչին բնութագրող բառեր՝ ազգանվեր, մարդասեր, հայրենանվեր, անկոտրում, կենսունակ, չհուսահատվող, նպատակասլաց, իսկ այս հատկանիշների մասին վկայող հատվածները դուրս են գրվում տեքստից: Խմբերում կատարված աշխատանքները ներկայացվում են խմբային քննարկման, փոխադարձ հարց ու պատասխանների միջոցով: Վերջում յուրաքանչյուր խմբի ավագ նշում է, թե նկարչի կյանքի, գործի, արվեստի, նրա արարքների մեջ հատկապես ինչն էր օրինակելի իրենց համար: Այս կերպ երեխաներն ինքնուրույն կարողանում են գնահատել և ճիշտ արժևորել համամարդկային կարևոր արժեքները՝ մարդասիրություն,

[9] Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Սարգսյան Վ., Չիբուխչյան Կ., Մայրենի 4, Երևան, 2009, Սարյանի նկարներում շողշողում է Հայաստանի հավերժությունը, էջ 17-18:
[10] Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Ինքնուրույն ընթերցանության նյութեր, 4-րդ դասարան, Երևան, 2012, էջ 64-72:

հայրենասիրություն, գործի նվիրում, կյանքում բարին գործելու, մնայուն արժեքներ ստեղծելու կարևորում և գիտակցում:

Դասն ամփոփվում է խմբերի և ուսուցչի համատեղ աշխատանքով նախապես պատրաստված «Սարյանական գունապնակը տեսանկարաշարով», որում ներկայացվում են համացանցից, հանրագիտարաններից ու տեղեկատվական այլ աղբյուրներից ձեռք բերված նյութեր, սարյանական արվեստի նկարներ՝ երեխաների ընտրությամբ: Աշակերտներն ընթերցում են նաև տեսանկարաշարում ներկայացվող նկարների շուրջ իրենց փոքրիկ նկարագրական շարադրությունները: Այսպիսով, նկարագրված դասի ընթացքում ուսուցիչը հնարավորություն ունի հեղինակավոր անձի օրինակը դարձնել արժեքային դաստիարակության միջոց, այն ծառայեցնել սովորողների մեջ քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք սերմանելուն: Խմբային աշխատանքը նպաստում է սովորողների մեջ միմյանց նկատմամբ ուշադրություն, դժվարությունները միասին հաղթահարելու և միասին հաջողություններ ունենալու ձգտում ձևավորելուն, նրանք սովորում են լսել տարբեր, հակասական կարծիքներ, տեսակետներ, ընդօրինակել, գնահատել միմյանց:

Նման դասաժամերի ընթացքում սովորողների վրա մեծապես ներգործում են հեղինակավոր, հանրաճանաչ անձինք, որոնցից նրանք կարող են ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական, այնպես էլ բացասական մոդելներ: Ուսուցչի խնդիրը պետք է լինի սովորողների մեջ վերջիններիս առնչությամբ ճիշտ վերաբերմունք և գնահատական ձևավորելը:

Առաջին դասարանում ուսումնասիրվող նյութերում մեծ տեղ են գրավում խրատական առածներն ու ասացվածքները, որոնք արժեքային դաստիարակության մեծ նշանակություն ունեն: Այսպես՝ «Գիրք» բանաստեղծության ուսումնասիրումը զուգորդվում է «Գիրքը քո լավագույն բարեկամն է. Պահպանի՛ր գիրքը»[11] ասացվածքի ուսումնասիրությամբ: Վերջինս երեխաների մեջ սերմանում է սեր և հոգատարություն դեպի գիրքը: Նրանք հասկանում են գրքի կարևորությունը և բարեխղճորեն օգտագործում այն:

[11] Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1, Երևան, 2010, էջ 10:

«Կորած օրը»[12] ուսումնական նյութի մատչելի և հասկանալի մատուցմանը և այն արժեհամակարգի ձևավորմանն ուղղելուն մեծապես նպաստում են ժամանակը արժևորելու, կարևորելու և գնահատելու, երեխաների մեջ աշխատասիրություն սերմանող հետևյալ ասացվածքները. «Ժամանակը ոսկի է», «Ով ալարի, ոչ դալարի», «Գործը վաղվան մնաց՝ իմացիր՝ կորավ գնաց»: Երեխաների մեջ դեպի աշխատանքը սեր և դրական վերաբերմունք է սերմանում նաև «Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն» ասացվածքը:

«Աշխարհում ամեն բան կճարվի, բացի հորից ու մորից» առածը ծնողասիրություն է սերմանում երեխաների մեջ, նրանց փոխանցում ծնողների կարևորության գաղափարը: Դաստիարակչական նշանակություն ունի «Մի՛ ասա, որ չլսես»[13] առածը: Այն փոխկապակցված է ուսումնական նյութի հետ և բխում է նրա հիմնական գաղափարից՝ ով ինչ անի, այն էլ կստանա: Առածի ուսումնասիրմամբ երեխաները հասկանում են մարդկանց խրատներն ու խորհուրդները չանտեսելու, գնահատելու կարևորությունը: «Ստի ոտքերը կարճ են»[14] առածի ուսումնասիրման հիմքում երեխաներին սուտ խոսելու երևույթի բացասական հետևանքներին ծանոթացնելն է: Այս կերպ նրանց մեջ արմատավորվում է ճշմարտախոսությունը, նրանք հասկանում են, որ սուտը չարիք է, որ ստախոսությամբ ցանկալի արդյունքին հասնել հնարավոր չէ և որ սուտը «կարճ կյանք ունի»:

Ընթերցվում է առածը կամ ասացվածքը, բացատրվում իմաստը, երեխաները գտնում և ընթերցում են նախորդող ուսումնական նյութի մեջ առածի կամ ասացվածքի հետ կապված հատվածը, փորձում գտնել ընդհանրություններ: Առածների և ասացվածքների ուսումնասիրումը նպաստում է երեխաների արժեհամակարգի ձևավորմանը: Իմաստուն առածներն ու ասացվածքները երեխաներին օգնում են գնահատել ինչպես իրենց արարքները, այնպես էլ ուրիշների գործողությունները:

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ առանձնակի նշանակություն ունեն նաև հայրենագիտական

[12] Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., նույն տեղում, էջ 17:
[13] Նույն տեղում, էջ 26:
[14] Նույն տեղում, էջ 55:

ստեղծագործությունները, որոնց ուսումնասիրումը դաստիարակչական ու կրթական կարևոր նշանակություն ունի հատկապես տարրական դպրոցում: Այդ ստեղծագործությունների ուսումնասիրմանը բավականաչափ տեղ է հատկացվում մայրենիի ուսուցման գործընթացում, որի արդյունավետ կազմակերպման համար պակաս կարևոր չեն նաև պատմական հուշարձաններ այցելությունները՝ վերջիններիս նպատակային և հետևողական կիրառման համատեքստում: Անհերքելի է հայրենագիտական ստեղծագործությունների ուսումնասիրման դասաժամերի արդյունավետ կազմակերպման կարևորությունն աշակերտների անձի համակողմանի զարգացման գործում, որն էլ ընդգծում է այդ գործընթացի արդյունավետ կազմակերպման կարևորությունը: Հայրենագիտական ստեղծագործությունների ուսումնասիրումը հույժ կարևոր է կրտսեր դպրոցականների բարոյակրթման, դաստիարակության, արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման համար: Այն մեծապես նպաստում է կրտսեր դպրոցականների մեջ դեպի հայրենի երկիրը, մայրենի լեզուն, ազգայինը սեր առաջացնելուն, ազգային ու հայրենանվեր վեհ գաղափարները սերմանելուն, մշակութային արժեքները ճանաչելուն, նրանց հասանելի և ընկալելի դարձնելուն, դրանք պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու կարևորության գիտակցումը ձևավորելուն: Հայրենասիրական ստեղծագործությունների ուսումնասիրությունը մայրենիի դասագործընթացում կարևոր բաղադրիչ է: Հայրենասիրական թեմաներով ստեղծագործությունները բացառիկ տեղ ունեն մայրենիի դասագրքերում և ընթերցարաններում, ունեն դաստիարակչական մեծ արժեք, միևնույն ժամանակ արժեքային համակարգի ձևավորման արդյունավետ միջոց են:

Հայրենասիրական ստեղծագործությունների ուսուցման ժամանակ սովորողնե-րի հայրենասիրական և բարոյական դաստիարակության խնդիրների լուծման գլխա-վոր պայմանը սովորողների՝ գրական ստեղծագործությունը խորությամբ հասկա-նալու, վերլուծելու, ինչպես նաև ինքնարտահայտվելու կարողությունն է: Մայրենի լեզվի դասերին աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ կարդում են գրական ստեղծագործություններ: Ստեղծագործական գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ

- խորհեն ընթերցածի շուրջ,

- ապրումակցեն հերոսներին,
- գնահատեն նրանց արարքները,
- իմաստավորեն նրանց խնդիրները,
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ,
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Մայրենիի դասագրքերում հայրենագիտական ստեղծագործությունների միջոցով աշակերտները ոչ միայն սովորում են կարդալ, ընկալել կարդացածը և վերարտադրել, այլև տեղեկություններ են ձեռք բերում Հայաստանի, նրա քաղաքների, բնության, հայ ժողովրդի պատմության, սովորույթների մասին, ինչպես նաև՝ բազմաթիվ աշխարհաճանաչողական գիտելիքներ, որոնք զարգացնում են նրանց գեղագիտական ճաշակը, մտածողությունը, նպաստում արժեքային դաստիարակության ներուժի ավելացմանը:

Մայրենիի երրորդ դասարանի դասագրքում[15] ներառված «Մեր հայրենիքի հերոս պաշտպանները» գլխագրով դասանյութն ու դրա հետ կապված՝ «Ասք լավաշի մասին», «Տիգրանն Ավարայրում» հայրենասիրական ստեղծագործությունները, «Ավարայրի ճակատամարտը» դասանյութը ազգային արժեքների համակարգի ձևավորման լավագույն միջոց են: Դրանցում արծարծվում են հայրենիքի, ազգայինի, հայրենիքի պաշտպանության, հայրենիքին նվիրվածության, հերոսականության, խիզախության, քաջության, խաղաղասիրության, ազատատենչ լինելու, բռնակալությունը, վախկոտությունը, ստրկամտությունն ու ենթակայությունը քննադատելու, իսկ ազատախոհ, հայրենանվեր, անձնուրաց պայքարը սատարելու գաղափարները, ինչպես նաև՝ հայրենիքի պաշտպան հերոսներին ճանաչելու, նրանց արարքները, հայրենիքի պաշտպանության անձնուրաց պայքարը ճիշտ գնահատելու և հասկանալու հիմնահարցեր: Դրանց միջոցով սովորողները տեղեկատվություն են ստանում հայրենիքի կայացման ու պաշտպանության դժվարին ճանապարհին տեղի ունեցած կարևորագույն պատմական իրադարձության՝ Ավարայրի ճակատամարտի ու պատմական հերոս, հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի, նրա անձնվեր պայքարի, անսահման հայրենասիրության մասին: Հասկանում և արժևորում են

[15] Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, ԷԴԻԹ ՊՐԻՆՏ, Երևան, 2008, էջ 119-129:

հայրենիքի հարատևման ու ամրակայման համար մայրենի լեզվի ու հավատի, դրանք պահպանելու վճռորոշ տեղն ու դերը:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հարցում մենք առանձնահատուկ կարևորում են նաև պատմական հուշարձանների ուսումնասիրման ազդեցությունը աշակերտների մասնավորապես՝ հայրենասիրական դաստիարակության գործում: Պատմական հուշարձանները մեր մշակույթի անբաժան մասն են, դրանց մասին իրազեկումը յուրաքանչյուր հայի հաղորդակից է դարձնում իր պատմությանն ու մշակույթին: Մայրենիի դասագրքերում և ընթերցարաններում զետեղված հայրենագիտական նյութերի և դրանց առնչվող պատմական հուշարձանների ուսումնասիրումը զուգակցում է ուսումնական գործընթացի մի շարք կարևոր նպատակներ՝ աշակերտների ճանաչողական գիտելիքների համալրում և հայրենասիրական դաստիարակության ձևավորում և ամրապնդում: Պատմական հուշարձաններ այցերը հայրենագիտական ստեղծագործության ուսուցման արդյունավետ ուղի են, քանի որ աշակերտներին առավել ընկալելի են դարձնում մատուցվող նյութը՝ միաժամանակ ունենալով դաստիարակչական մեծ ներգործություն: Օրինակ՝ «Սասունցի Դավիթ» ստեղծագործության ուսուցման ժամանակ, բացի հայկական էպոսի, նրա գլխավոր կերպարի մասին գաղափար տալուց, արձակ և չափածո ստեղծագործությունները արտահայտիչ կարդալու կարողությունների ձևավորումից, երեխաների մեջ պետք է դաստիարակել քաջություն, խիզախություն, հարազատ ժողովրդի անցյալի և ձեռքբերումների նկատմամբ ազգային հպարտություն, ձևավորել սեփական պատմությունը լավ իմանալու, ազգի մեծերին ճանաչելու և փառաբանելու ձգտում և սերմանել սեր, նվիրվածություն ազգի ու հայրենիքի նկատմամբ: Որպես նշված ստեղծագործության դասավանդման արդյունավետ ուղի՝ կարելի է ընտրել արտադասարանական աշխատանքը և երեխաներին տանել՝ Սասունցի Դավթի արձանը դիտելու: Առաջին դասարանում էպոսի ուսումնասիրումը նպատակաուղղվում է երեխաների արժեհամակարգի ձևավորմանը, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու, գնահատելու, լավն ու վատը, չարն ու բարին տարբերակելու կարողությունների, սիրո, հավատարմության, հայրենասիրության, ազնվության և այլ արժեքներ սերմանելուն: Կարծում ենք այս

դասանյութի դաստիարակչական ներուժը կավելանա, եթե ուսուցչի կողմից կազմակերպվի հետաքրքիր էքսկուրսիա՝ վիրտուալ այց Սասունցի Դավթի արձանին: Դա կարելի է իրականացնել հետաքրքրական նկարաշարի ստեղծմամբ ու այն սահիկահանդեսով ներկայացնելու միջոցով: Կարելի է այդ աշխատանքում ներգրավել նաև երեխաներին, նրանց առաջադրելով՝ համացանցից ընտրել Սասունցի Դավթի արձանը պատկերող լուսանկար, պատրաստել դրա վերաբերյալ փոքրիկ բնութագիր և այդ բնութագրերը ներկայացնել նկարաշարի ցուցադրության ընթացքում: Այս կերպ, կարծում ենք, որ երեխաները հավելյալ տեղեկատվություն կստանան Սասունցի Դավթի հերոսական կերպարի, նրա արձանի մասին, վիրտուալ այցը կդառնա օժանդակ միջոց սերմանելու նրանց մեջ հայրենասիրություն, հայրենի հողին, ջրին, ծառ ու ծաղկին, բառ ու բանին հոգեհարազատություն: Հնարավորության դեպքում՝ կարելի է կազմակերպել նաև իրական այցելություն Սասունցի Դավթի արձանին:

Երեխաներին պետք է բացատրել՝ ժողովրդական հզոր հոգին է կուտակված այդ արձանի մեջ: Միշտ լավատես մեր ժողովուրդը անմահացրել է իր հերոս Սասունցի Դավթին՝ նրան դարձնելով իր անմահ հերոսը, իր լավագույն հատկանիշների ու առաքինությունների կրողը: Պատահական չէ, որ արձանին նայելիս թվում է՝ սիրելի հերոսը շարժման մեջ է: Ժողովրդի ազատատենչ ոգին մարմնավորող հերոսը, Քուռկիկ Ջալալին հեծած, մարմնավորում է դարեր շարունակ հայ ժողովրդի ունեցած ազատատենչ ոգին, այն նաև ազգային խորհրդանիշների խտացում է: Սասունցի Դավթի ձեռքերում կայծակի թուրն է՝ միշտ դիմադրելու նվաճողներին: Ձիու սմբակների տակ՝ ժայռի անկյունում, բրոնզե թասն է, որը կարծես հայ ժողովրդի համբերության խորհրդանիշը լինի: Դավիթը թուրը կարծես գերանդու նման է բռնել, ճիշտ և ճիշտ իր աշխատավոր ժողովրդի նման, բայց նաև հայրենիքին սպառնացող վտանգի պահին միշտ պատրաստ է կռվել ժողովրդի ազատությանը բռնացող թշնամիների դեմ:

Սովորողներին հայրենիքի մշակույթին հաղորդակից դարձնելը կրթական գործընթացի բաղկացուցիչ մասն է և վերահսկվում է հետևյալ ուղղություններով՝ սովորողների դաստիարակվածության աստիճանը, դասղեկական աշխատանքի որակը, ծնողների մասնակցությունը դաստիարակության գործընթացին,

համադպրոցական միջոցառումների անցկացման որակը, ռազմահայրենասիրական մասսայական աշխատանքներ, լրացուցիչ կրթության կազմակերպում և պարապմունքների որակը, բարոյական և գեղագիտական դաստիարակության կազմակերպում, վերականգնողական աշխատանք մանկավարժորեն բարձիթողի երեխաների հետ:

Այսպիսով՝ մայրենիի դասավանդման ընթացքում ուսումնական տարաբնույթ նյութերի նպատակային ուսումնասիրումը, այդ թվում՝ պատմական հուշարձանների ուսումնասիրումը հայերնագիտական թեմաների, ի թիվս այլ թեմաներով ստեղծագործությունների, ուսուցման ժամանակ ոչ միայն համալրում է աշակերտների գիտելիքները, զարգացնում է նրանց մտածողությունը, այլև ներարկում է նրանց մեջ սեր հայրենիքի պատմության ու մշակույթի նկատմամբ, բարձրացնում է հայրենասիրական դաստիարակությունը: Պատմական հուշարձանների ուսումնասիրման գործընթացը ուսուցիչը կազմակերպում է որպես արտադասարանական աշխատանք՝ զուգակցելով ուսուցանվող թեմային: Պատմական հուշարձանների վերաբերյալ ստացած գիտելիքները աշակերտները շարունակաբար լրացնում և համալրում են հետազոտական և խմբակային, համագործակցային աշխատանքներով՝ ձեռք բերած գիտելիքները հետագայում կիրառելով նաև կազմակերպվող միջոցառումների ժամանակ: Նմանատիպ աշխատանքները արժեքային համակարգի ձևավորման հիմնաքարերից են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով սույն հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը անձի համակողման զարգացման կարևորագույն առանցքն է և նրա համալիր դաստիարակության վերջնարդյունքը:
2. Արժեքների հանդեպ ճիշտ վերաբերմքունքը ու դրա կարևորության գիտակցումը արմատավորվում են տարրական դպրոցում, ուստի հարկավոր է մայրենիի դասաժամերը հնարավորինս ճիշտ և արդյունավետ կազմակերպել նաև տարրական դասարաններում՝ դրանք նպատակաուղղելով ինչպես երեխաների գիտելիքների, կարողությունների, ինքնուրույնության, ստեղծագործական մտածողության, այնպես էլ արժեքային համակարգի ձևավորման խնդրի լուծմանը:
3. Տարրական դասարաններում մայրենիի դասաժամերի հիմնական խնդիրները պետք է բխեն զարգացնող և ձևավորող ուսուցում ապահովելու հայեցակետից: Այսինքն՝ այդ գործընթացը պետք է ուղղվի սովորողների անհատական ու ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև երեխայի ինքնուրույնությունը, պատասխանատվությունը և անհատականությունը ձևավորելուն:
4. Առարկայի դասավանդման գործընթացի արդյունավետ կազմակերպման հիմքում ժամանակակից մեթոդներն են, քանի որ դրանք հնարավորություն են ընձեռում աշակերտներին ինքնուրույն ձեռք բերել, կառավարել, մշակել, գնահատել, վերլուծել ուսումնասիրվող նյութը և, դրա հիման վրա, ինքնուրույն որոշում կայացնել, աշխատել խմբերով, տեսնել սեփական աշխատանքի արդյունքն ու գնահատել այն, կատարել համատեղ խմբային ու համագործակցային աշխատանք, լինել պատասխանատու և հետևողական այդ աշխատանքի համար, գնահատել ինչպես իրենց, այնպես էլ մյուսների կատարած աշխատանքի արդյունքները, առավել ակտիվորեն ներգրավվել դասապրոցեսում: Վերջիններս էլ նպաստում են ինչպես դասանյութի հեշտ յուրացմանը, ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ու

իրականացմանը, այնպես էլ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը:

5. Արժեքային համակարգի ձևավորման հարցում կարևոր ենք համարում առարկայի դասավանդման մեթոդների գործադրման նպատակը և ակնկալվող արդյունքը: Ուստի՝ արժեհամակարգի ձևավորման տեսանկյունից՝ որպես նպատակ առանձնացնում ենք ուսուցման մեթոդները առարկայի դասավանդման գործընթացի ուսուցողական, ձևավորող, զարգացնող և դաստիարակչական հնարավորություններն առավել ընդլայնելուն նպատակաուղղելը, իսկ որպես արդյունք՝ սովորողների ակտիվության բարձրացումը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորումը, ակտիվ և հետաքրքիր ուսուցման գործընթացի ապահովումը, հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումը, ինքնուրույն գործունեության զարգացումը, ուսումնասիրվող նյութի շրջանակներում բարոյահոգեբանական, ազգային ու համամարդկային արժեքների մասին աշակերտների պատկերացումների և գիտելիքների ընդլայնումը, սեփական կենսափորձում դրանք արժևորելու և գործածելու կարողության և հմտության ձևավորումը:
6. Մայրենիի դասընթացը ներառում է գրական հարուստ ժառանգության, այդ թվում՝ բանահյուսական ստեղծագործությունների բազմաթիվ նմուշներ, որոնց ուսումնասիրումը նպատակաուղղվում է նոր սերնդին ճիշտ դաստիարակելու, բարոյակրթելու, նրա արժեհամակարգը ձևավորելու, ժողովրդական մտածելակերպը, բանիմացությունը, խորիմաստ և մշտապես արդիական, կյանքի տարբեր բնագավառներն ընդգրկող մտքերը նրան հասանելի դարձնելու, բարոյական արժեքներ, շրջապատող աշխարհի նկատմամբ վերաբերմունք, համատեղ աշխատելու՝ համագործակցելու կարողություններ ձևավորելու մշտատև գործին:
7. Առարկայի դասավանդման ընթացքում մեծ տեղ է հատկացվում նաև ուսումնական նյութերն արդիականացնելու անհրաժեշտությանը, որը հնարավոր է իրագործել այդ նյութերի ուսումնասիրման գործընթացը համապատասխանեցնելով ինչպես սոցիալական և կրթական պահանջներին,

այնպես էլ գրագետ, գեղեցիկ և հարուստ բառապաշարով, բանիմաց և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողությամբ օժտված, արժանապատիվ սերունդ կրթելու և դաստիարակելու նպատակից բխող խնդիրները հնարավորինս արդյունավետ կերպով լուծելուն:

8. Մայրենիի դասաժամին անցնելով մեծագույն արվեստագետ Մարտիրոս Սարյանի կյանքի ու արվեստի վերաբերյալ նյութը՝ հանգեցինք այն եզրակացության , որ ակնկալվող վերջնարդյունքը գոհացուցիչ չէր:Ինքնուրույն ընթերցանության ժամին կատարված խմբային աշխատանքի արդյունքում , որի ընթացքում բավականին շատ տեղեկատվություն էին հավաքել աշակերտները Մարտիրոս Սարյանի կյանքի ու արվեստի վերաբերյալ , աշակերտների մոտ ձևավորվեց կայուն արժեհամակարգ , զինվեցին նորանոր գիտելիքներով : Դասին մասնակցություն է ունեցել ամբողջ դասարանը՝ այդ թվում նաև թույլ առաջադիմություն ունեցող աշակերտները: Նրանց մեջ ձևավորվել է համախմբվածություն , համագործակցային կարողություններ , օրինակելի վարքագիծ և այլ արժեքներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաղդասարյան Է., Արժեքային վերակառուցումները ազգային կրթական բարեփոխումների համատեքստում, որպես Արցախյան շարժման ձեռքբերում, ԱրՊՀ, Գիտական ընթերցումներ, 2018(10), https://artsakhlib.am>2018/10, էջ 220-225:
2. Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Ինքնուրույն ընթերցանության նյութեր, 4-րդ դասարան, Երևան, 2012, էջ 64-72:
3. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, Էդիթ Պրինտ, Երևան, 2008:
4. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Մայրենի 2-4, Ուսուցչի ձեռնարկ, Մակմիլան-Արմենիա, 2007, 88 էջ:
5. Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Սարգսյան Վ., Չիբուխչյան Կ., Մայրենի 4, Երևան, 2009:
6. Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության արդիականացումը համաշխարհային գլոբալացման համատեքստում, Կրթությունը 19-րդ դարում գիտակրթական հանդես, հ. 1, էջ 50-83, Երևան, 2014:
7. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004:
8. Պապիկյան Կ., Սաֆարյան Լ., Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի համալիր բնույթը, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ա պրակ, https://vsu.am>grqer>aprak , էջ 357-361:
9. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ, Վանաձոր, 2008:
10. Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ա պրակ, https://vsu.am>grqer>aprak, էջ 396-401:
11. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1, Երևան, 2010: